# Հայաստանում ավելի շատ վստահում են Ռուսաստանին, մինչդեռ Վրաստանում՝ Վրաստանին, իսկ Ադրբեջանում՝ Ադրբեջանին

Միացյալ Նահանգների լրատվական գործակալության (USIS) հետազոտությունների և մամուլի արձագանքների գրասենյակի նախաձեռնությամբ 1992 թ.-ից ի վեր կովկասյան տարածաշրջանի երեք երկրներում՝ Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում պարբերաբար անցկացվում են հասարակական կարծիքի ուսումնասիրություններ:

Վերջին նման ուսումնասիրությունը հիմնվում է 1998 թ. սեպտեմբերից մինչև 1999 թ. հունվար ժամանակահատվածում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վրա: Հարցերը պատրաստվել են հետազոտությունների և մամուլի արձագանքների գրասենյակի կողմից: Յուրաքանչյուր երկրում հարցմանը մասնակցել է 1000-ական չափահաս (18 տարեկանից բարձր) քաղաքացի, որոնք ընտրվել են բազմաստիճան կամավոր ընտրությամբ:

Հարցազրույցները անցկացվել են հարցվողների տանը և նրանց վստահեցրել են, որ պատասխանները անանուն կմնան:

Վրաստանում հարցումն անցկացրել է Թբիլիսիի պետական համալսարանի ՍՈՑԻՈԳԵՈ հետազոտական ընկերությունը 1998 թ. սեպտեմբերի 9-23-ին:

Հայաստանում և Ադրբեջանում հարցումները կազմակերպել է Վրաստանի հասարակական կարծիքի ուսումնասիրությունների Բիզնես Ինստիտուտը (GORBI)՝ համագործակցելով այդ երկրների հետազոտական ընկերությունների հետ:

Հայաստանում հարցումն անցկացրել է Գիտությունների ազգային ակադեմիայի սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը 1998 թ. նոյեմբերի 11-17-ին:

Ադրբեջանում ՍԻՏԱՐ-Բաքու ընկերությունը 1998 թ. դեկտեմբերի 13-ից 1999 թ. հունվարի 3-ը:

Հարցումների հնարավոր սխալանքը կազմում է պլյուս-մինուս 4 տոկոս:

**Գրաֆիկ 1.**

Ափսոսանք Խորհրդային Միության փլուզման համար (տոկոսով)
Համաձա՞յն եք, թե՞ ոչ հետևյալ տեսակետին.
**«Մեծ դժբախտություն է, որ Խորհրդային Միությունն այլևս գոյություն չունի»:**




**Գրաֆիկ 2**

Ձեր երկրում զարգացումները ճի՞շտ ուղղությամբ են ընթանում, թե՞ սխալ (տոկոսով)




**Գրաֆիկ 3.**

Ակնկալիքներ ապագայից (տոկոսով)
Դուք համաձա՞յն եք, թե՞ ոչ հետևյալ տեսակետին.
**«Երիտասարդներն այժմ կարող են ավելին ակնկալել ապագայից»:**




**Գրաֆիկ 4.**

Վրաստան. վստահությունը տարբեր երկրների նկատմամբ (տոկոսով)
**Որքա՞ն եք վստահում հետևյալ երկրների ունակությանը՝ կովկասյան տարածաշրջանի խնդիրներին պատասխանատու կերպով վերաբերվելու առումով:**




**Գրաֆիկ 5.**

Ադրբեջան. վստահությունը տարբեր երկրների նկատմամբ (տոկոսով)
**Որքա՞ն եք վստահում հետևյալ երկրների ունակությանը՝ կովկասյան տարածաշրջանի խնդիրներին պատասխանատու կերպով վերաբերվելու առումով:**




**Գրաֆիկ 6.**

Հայաստան. վստահությունը տարբեր երկրների նկատմամբ (տոկոսով)
**Որքա՞ն եք վստահում հետևյալ երկրների ունակությանը՝ կովկասյան տարածաշրջանի խնդիրներին պատասխանատու կերպով վերաբերվելու առումով:**




**Գրաֆիկ 7.**

**Լեռնային Ղարաբաղի հարցում ակնկալիքներ**
Այս գրաֆիկը պատկերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավոր տարբերակներ:
**Ձեր կարծիքով ո՞ր տարբերակն է ավելի լավ բնութագրում մոտակա երկու տարիների ընթացքում իրադրության հնարավոր զարգացումը:**




**Գրաֆիկ 8.**

**Աջակցություն օտարերկրյա ներդրումներին (տոկոս)**
Ոմանք մարդիկ ասում են, որ պետք է խրախուսել արտասահմանյան ընկերությունների կապիտալի ներդրումը, որովհետև կօգնի մեր երկրի տնտեսության զարգացմանը: Մյուսները պնդում են, որ արտասահմանյան ներդրումները չպետք է խրախուսվեն, որովհետև արտասահմանցիները կարող են շատ մեծ ազդեցություն ձեռք բերել մեր ներքին գործերում:
**Ո՞ր տեսակետն եք ընդունում:**




**Գրաֆիկ 9.**

**Աջակցություն արտասահմանյան բիզնեսին (տոկոս)**
Համաձա՞յն եք, թե՞ ոչ հետևյալ տեսակետին.
**Օտարերկրյա ընկերություններին պետք է հնարավորություն տրվի սեփական բիզնես ծավալել մեր երկրում:**




digitised by A.R.A.R.@

